№ 51. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19. 1874 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19. № 51.

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբ. էս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 9—12 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երեք տարի անցաւ։—Ներքին տեսութիւն։ Հայոց թատրոն։ Կովկասի հանքերը։ Նամակ Բազուից։ Նամակ Քութայիսից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ Վենեցիայի Մխիթարեաններ։—Խառն լուրեր։—Ցայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Նամակ Գերմանիայից։

ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆՑԱԻ

—

Յունվար ամիսը մօտենում է։ Մեր լրագրի գոյութեան երեք տարին լրանում է յունվարի 1-ին գալու 1875 թուին։

Ի՞նչ արեցինք այդ երեք տարվայ ընթացքում....

Արդեօք մեր յայտնած գաղափարներից գոնէ մինը ընդունվեցաւ, արդեօք մեր պաշտպանած սկիզբներից գոնէ մինը իրականութիւն ստացաւ....

Ո՛չ...ինչպէս երեք տարի սրանից առաջ, այնպէս էլ այժմ, երեք տարից յետոյ, մեզ շրջապատում են նոյն հանգամանքները, մենք մեր չորս կողմն ենք տեսնում նոյն թշնամիներին,—և ոչ մի բարեկամ...։

Արդեօք երիտասարդութիւնը աւելի անկողմնապահ է դարձել, արդեօք նրա նախանձը դէպի այն ամենը, որ նրանից բարձր է, քաջ է....ոչ։

Արդեօք հին սերունդը յաղթվել է, թուլացել է, արդեօք նա նոյնքան չէ ճնշում, ինչքան երեք տարի սրանից առաջ, արդեօք նա հրաժարվել է իր ցնորքից՝ կանգնեցնել ժամանակի հոսանքը, արդեօք դնել նոր մաքերի առաջադիմութեանը....ոչ։

Արդեօք հոգևորականութիւնը հասկացել է իր բարձր կոչումը, և օգուտ է քաղել իրան անդադար տուած դասերից....ոչ։

Արդեօք հասարակութիւնը սեփականացրել է աւելի առաջադէմ ոգի, արդեօք հրաժարվել է նա ամեն նոր, լուսաւոր երևոյթները հալածելուց, խոստովանել է նա թէ մինչև այժմ միշտ եղել է խաւարի ամենահաւատարիմ պաշտպան....ոչ։

Արդեօք ուսումը դարձել է ազգի համար կարևորութիւն....ոչ։

Արդեօք մենք մեր լրագրական գործունէութեամբ գոհ ենք և կարող ենք ասել, թէ ընթերցանութիւնը դարձել է ժողովրդի համար պահանջմունք....ոչ։

Ոչ, ոչ, ոչ...։

Ինչպէս երեք տարի սրանից առաջ, նոյնպէս և այժմ մենք աշխատում ենք, խոստովանելով, թէ դեռ երկար ժամանակ մեր աշխատանքը ապարդիւն կը լինի, բթացրած, յամառ, ինքնահաւան, ագէտ, բարոյապէս ընկած, հարստահարող հասարակութեան մէջ...։

Մենք յուսահատված աշխատում ենք.... այո՛, յուսահատված արդեան անմիտ հասարակութեան վերաբերութեամբ, մեր բոլոր յոյսը միայն ապագայի վրա դնելով....

Գոնէ ստացա՞նք մենք այդ երեք տարվայ մէջ մի որ և է կողմից համակրութիւն, կազմվեցա՞ւ արդեօք մեր չորս կողմը համամիտների որ և է կուսակցութիւն....ոչ։

Արդեօք եկան ուրիշները մեզ օգնելու.... մեկնեցին մեզ համակրութեան ձեռքը....ոչ։

Արգելքներ շատ տեսանք, և դեռ շատ կը տեսնենք,—բայց օգնութիւն ոչ մի կողմից։

Ինչպէս երեք տարի առաջ մենք մենակ էինք կանգնած մի հասարակական անապատի մէջ,—նոյնպէս և այժմս մենակ ենք։ Ուր որ նայենք, տեսնում ենք՝ կամ կատաղած երեսներ, կամ յիմար ծիծաղ....

Բայց ոչինչ.... դուք մեր գործունէութեան վրա նայում էք, ինչպէս ցնորված, հիւանդ մարդու գործունէութեան վրա, իսկ մենք ձեզ համարում ենք՝ ոչ թէ կենդանի էակներ, այլ միայն կենդանի կերպարանք ունեցող անցաւոր ուրուականներ։

Դուք կարող էք մեզ անձամբ ոչնչացնել (ի հարկէ շատ կուզենայիք),—բայց չէք կարող մեր յայտնած մաքերը ոչնչացնել, որովհետև նրանք մեր սեփական, հնարած մաքերը չեն, այլ ամբողջ մարդկութեան ոգու ազատ

Մեզ կը ոչնչացնէք,—այդ կարող էք. մեզ կը դնէք դագաղ և կը թաղէք հողի մէջ....

Իսկ մեզանից յետոյ կը գան ուրիշները որք մեզանից սաստիկ մաքեր կը յայտնեն ձեզ դէմ։

Մարմնապէս երեք տարվայ ընթացքում դուք կարող էիք մեզ թուլացնել, բայց ոչ թէ բարոյապէս....

Մենք էլի նոյն ենք և էլի նոյն աչքով ենք նայում մեզ շրջապատող արդեան հանգամանքների վրա, արդեան հին և նոր սերունդի, արդեան հասարակական և ընտանեկան, թէև սպառնող, բայց անցաւոր ուրուականների վրա։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Գ. Սունդուկեանի „Քանդած Օջախ“—Գ. Զըմշկեանի բէնէֆիս, դեկտեմբերի 15-ին, Գերմանական Կլուբի դահլիճում։

Մեր խօսքերը իրագործվեցան,—թատրոնը լիքն էր։ Մեր գուշակութիւնը կատարվեցաւ և այդպէս էլ տուեց պիէսային բոլորովին այլ նշանակութիւն

Սունդուկեանցի նոր գրվածքը ստեղծված է Օսէփի դերի համար, նա է բոլոր անցքի, ամբողջ գաղափարի կենդրոն, մնացածները նրա

ի հարկէ երբեմն յայտնվում են նոյնպէս երեխայական, թերի և ծիծաղելի կարծիքներ,—բայց այս միջոցով աշակերտուհիները նկատելի կերպով զարգանում են և ընդելանում իրանց ուսուցչական կոչմանը։ Հասկանալի է, որ դիրեկտորը իր վերջնական կարծիքով տալիս է վճիռ այս կամ այն հարցին։

Այս փոքր տեղեկութիւնը առ ժամանակ բաւական համարելով, ես կը կամենայի խօսել այս տեղի կեանքի մասին։ Գոթա քաղաքը, ուր գտնվում է այս ուսումնարանը, շատ հանգիստ տեղ է և հեռու ամենայն վատ և չարչ օրինակներից։ Օտարուհին չի ենթարկվի այստեղ ոչ մի անպատուութեան կամ զրկանքի....

Կեանքը, համեմատելով օրինակ Թիֆլիսի հետ, շատ արժան է՝ մի անձի համար բաւական կը լինի 400—500 ռուբլ տարեկան, որ ապրի առանց կարօտութեան և բաւականացնէ բոլոր ուսումնական պիտոյքները։ Պատուելի դիրեկտորը ունի իր ընտանիքում գիշերօթիկների պանսիոն օտարականաց համար, այնպէս որ օտարականուհին ամենևին չի զգայ իր օտարութիւնը։

Ի հարկէ լրագրական նեղ յօդվածը չէ կարող ամբողջութեամբ ամփոփել այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսի է մեզ համար այս ուսումնարանից ուսուցչուհիներ և մանկական պարտէզպանուհիներ ունենալու անհրաժեշտութիւնը։ Մեր կիսակիրթ օրիորդաց համար այս ուսումնարանը մի գերազանց միջոց կը լինէր, որով նրանք կը կարողանային ձեռք բերել բացի գերմանական լեզուի հմտութիւնից, նոյնպէս գեղեցիկ և նորընտիր ձևեր և եղանակներ դաստիարակութեան, որոնց մէջ մեր հասարակութիւնը զգում է անհրաժեշտ կարևորութիւն։ Եթէ այս իմ փոքր տեղերութենից օգուտ քաղեն մի քանիս իմ հայրենակից օրիորդներից և տիկիններից, ես ինձ փոքր ի շատէ հասած կը համարեմ իմ նպատակիս։

Մարիամ Ք....

Ց. Գ. Տարին այս ուսումնարան մտնողների համար սկսվում է և շարունակվում է Զատիկից մինչև միւս Զատիկը։ Ընդունվում են ամեն հասակի կանայք։ Հասցէն ուսումնարանի հետևեալն է՝ „Gotha, Herrn Köhler, Director der Lehrerinen-Schule.“

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Գոթա, դեկտեմբեր 1874

Արդէն երրորդ ամիսն է գնում, որ ես անընդհատ յաճախում եմ Սաքսոնիայի Գոթա քաղաքում գտնվող օրիորդաց ուսուցչական դպրոցը և մանկական պարտէզպանուհիների Սեմինարիա։ Այդ ուսումնարանը գտնվում է մանկավարժ պ. Կեօլերի կառավարութեան տակ և առաջինն է համարված ամբողջ Գերմանիայում։ Համարեա Գերմանիայի ամեն մի ծայրից հաւաքված են այստեղ աշակերտուհիներ։ Կան նոյնպէս Ռուսաստանից, Ամերիկայից, Անգլիայից և Նորերումս Ռումինիայի կառավարութիւնը ուղարկել է այստեղ երեք ուսուցչուհի, երկու տարվայ ժամանակով, թէ բոլոր մանկավարժական ուսման մէջ և թէ մասնաւորապէս Ֆրեօբէլի դասաւանդութեան ձևերի մէջ, (որին ամենաեռանդոտ հետևողն է պ. դիրեկտորը), կատարելագործվելու համար։

Ուսումնարանի նպատակն է՝ տալ հասարակութեանը կրթված մայրեր, միջնակարգ և ժողովրդական ուսումնարանների ուսուցչուհիներ և վերջապէս մանկական պարտէզպանուհիներ։

Ուսումնարանը միասին մանկական պարտէզով պարունակում է իր մէջ ինն դասատուն։ Իններորդ և ութերորդ դասատունները բաղկացած են երկսեռ երեխաներից, սկսած համարեա 4 տարեկան հասակից մինչև 8։

Այս երկու բաժանումներ կազմում են մանկական պարտէզը, ուր պարապում են խաղալիքներով, որոնց թիւն ու կերպերը շատ զանազան են, երգերով, պատկերների նկարագրութեամբ, կեղծեալ թռչուններով, զանազան մանկական պատմութիւններով, թէ տպած գիր և թէ ձեռագիր կարդալով (այս վերջինը ութերորդ դասատան, և ամենափոքրի մէջ), կաքաւելով, մարմնի անդամները կանոնաւոր շարժողութեամբ զարգացնելու համար և այլն։ Նկարագրել բոլորը, թէ ինչ առարկաներ են սովորեցնում և ինչ պարապմունքներ են տալիս երեխայոց, նոցա մտքին համեմատ, որոնք խաղալով գիտութիւն են սովորում,—դա մեզ շատ հեռու կը տանէր մեր բուն նպատակից։

Եօթերորդ, վեցերորդ, հինգերորդ, չորրորդ և երրորդ դասատները պարունակում են իրանց մէջ ընդհանուր կրթութեան առարկաները, որոնց մէջ շատ մեծ ուշադրութիւն է դարձնվում իրանց հայրենիքի պատմութեան, աշխարհագրութեան և ընդհանրապէս այն ամեն մի յատկութեան վրա, որ Գերմանիային է վերաբերում։

Թէ մանկական պարտէզը և թէ ընդհանուր զարգացման դասատունները ի հարկէ ունեն իրանց արժանաւորութիւնները, բայց դժբաղդաբար մեզ, հայերիս համար, նոքա անմատչելի են, որովհետև դժուար թէ կարողանայինք փոքր երեխաներին օտար երկիր ուղարկել։ Իմ խօսակցութիւնս կը լինի ուրեմն մնացած դասատների վրա, այսինքն՝ երկրորդի և առաջինի վրա, որոնք կարող են մեզ համար ունենալ մեծ նշանակութիւն։ Սոքա կարող են լինել մեր օրիորդների համար վերջնական կրթութեան և ապագայ գործունէութեան համար պատրաստութեան տեղ։ Այն օրիորդները, որոնք արդէն վերջացել են իրանց ուսումն այս կամ այն միջնակարգ ուսումնարանում և կամենում են նուիրել իրանց ուսուցչական պաշտօնին, ահա այդպիսիների համար այս ուսումնարանը հաղագիւտ և ամենայարմար մի հիմնարկութիւն է։ Երկրորդ դասատան մէջ սովորեցնում են այն առարկաները, որոնք հարկաւոր են մանկական պարտէզպանուհուն, այստեղ ուսումը տևում է մի տարի։ Աշակերտուհիները բացի դասերից յաճախում են անդադար մանկական պարտէզը և երեխայոց հետ պարապում են այս կամ այն առարկաներով. այստեղ է նոցա կենդանի լաբորատորիան, որտեղ նոքա փորձով սովորում են թէ դասատուութեան ձևերը, թէ երեխայոց ընութիւնը, թէ նոցա հետ վարվելու եղանակը։ Ուսումը վերջացնելով այս երկրորդ դասատան մէջ, աշակերտուհիք իրաւունք են ստանում բանալ սեփական դպրոցներ, կամ դասատու լինել մանկական պարտէզներում, բայց կարելի է ասել որ սոցա մեծ մասը դոբանով չեն բաւականանում, այլ անցնում են առաջին դասատուն, ուր ուսումը շարունակվում է նոյնպէս մի տարի։

Երկրորդ դասատան մէջ դաս են տրվում հետեւեալ առարկաները՝ ա) Կրօն (ընդհանուր քրիստոնէական վարդապետութիւն, որը կարդում է ինքն դիրեկտորը, առանց նորան վերաբերելու այս կամ այն մասնաւոր դաւանութեանը), բ) բանախօսութիւն և փորձ մանկական պարտէզի, գ) ընդհանուր մանկավարժութիւն, դ) Ֆրեօբէլի գործիքները և խաղալիքները, ե) լեզուն և գրականութիւնը գերմանական, զ) ֆրանսիական լեզու, է) անգլիական լեզու, ը) թւաբանութիւն և երկրաչափութիւն, թ) նկարչութիւն և վայելչագրութիւն, ժ) պատմութիւն և աշխարհագրութիւն, ի) բնական պատմութիւն, լ) երգեցողութիւն, խ) խաղեր և մարմնամարզութիւն։

Իսկ առաջին դասատան մէջ կան եւ՝ մանկավարժութեան պատմութիւն, մեթոդիկա, դասաւանդութեան փորձերը ժողովրդական և միջնակարգ ուսումնարաններում և այլն։ Բացի վերոյիշեալ առարկաներից կան նոյնպէս՝ ֆիզիկա, քիմիա,—բայց ափսոս, որ շատ ուշք չեն դարձնում այս առարկաների վրա։ Առհասարակ պէտք է ասել, որ բնական առարկաները, բաւական թոյլ աւանդված լինելով, չեն բռնում ուսումնարանում իրանց արժանաւոր տեղը։

Բացի այս պարապմունքներից աշակերտուհիք պարտաւոր են յաճախել մանկական պարտէզը, փորձի համար դասեր կարդալ և դիտել ընդհանրապէս այնտեղի պարապմանց ընթացքը։ Այս վերջին կարգադրութիւնը մեծ նշանակուն ունի ապագայ ուսուցչուհիների համար՝ այստեղ նա փորձով ցոյց է տալիս իր գիտութիւնը և ընդունակութիւնը ապագայ կոչման համար։ Շաբաթական երկու անգամ՝ մին 2-որդ, և միւսն 1-ին դասատանց աշակերտուհեաց համար նշանակվում է օր և ժամ, երբ պէտք է մի քանի աշակերտուհիներ կարդան դաս մանկական պարտէզի աշակերտաց համար։ Այստեղ ներկայ են գտնվում բոլոր բարձր դասատանց աշակերտուհիները, դիրեկտորը, մանկական պարտէզի տեսչուհին և շատ անգամ մասնաւոր հիւրեր, որոնց թոյլ է տրվում առանց արգելքի ներկայ գտնվել այդ վարժութիւններին։ Աշակերտուհիներից մին գրում է օրագիր, բոլոր եղելութեանց վրա և ամեն հանդամանքները պատմում է մի առ մի, ինչպէս լինում է ընդհանրապէս ամեն օրագրութեան մէջ։ Աշակերտուհիները իրանց կողմից պարտական են դասախօսութենից յետոյ յայտնել իրանց կարծիքը կարդացած դասի մասին։ Լինում են այսպիսով բաւական հետաքրքիր վիճաբանութիւններ, թէև

որոնք երբեմն յայտնվում են նոյնպէս երեխայական, թերի և ծիծաղելի կարծիքներ,—բայց այս միջոցով աշակերտուհիները նկատելի կերպով զարգանում են և ընդելանում իրանց ուսուցչական կոչմանը։ Հասկանալի է, որ դիրեկտորը իր վերջնական կարծիքով տալիս է վճիռ այս կամ այն հարցին։

Այս փոքր տեղեկութիւնը առ ժամանակ բաւական համարելով, ես կը կամենայի խօսել այս տեղի կեանքի մասին։ Գոթա քաղաքը, ուր գտնվում է այս ուսումնարանը, շատ հանգիստ տեղ է և հեռու ամենայն վատ և չարչ օրինակներից։ Օտարուհին չի ենթարկվի այստեղ ոչ մի անպատուութեան կամ զրկանքի....

Կեանքը, համեմատելով օրինակ Թիֆլիսի հետ, շատ արժան է՝ մի անձի համար բաւական կը լինի 400—500 ռուբլ տարեկան, որ ապրի առանց կարօտութեան և բաւականացնէ բոլոր ուսումնական պիտոյքները։ Պատուելի դիրեկտորը ունի իր ընտանիքում գիշերօթիկների պանսիոն օտարականաց համար, այնպէս որ օտարականուհին ամենևին չի զգայ իր օտարութիւնը։

Ի հարկէ լրագրական նեղ յօդվածը չէ կարող ամբողջութեամբ ամփոփել այնպիսի մի կարևոր հարց, ինչպիսի է մեզ համար այս ուսումնարանից ուսուցչուհիներ և մանկական պարտէզպանուհիներ ունենալու անհրաժեշտութիւնը։ Մեր կիսակիրթ օրիորդաց համար այս ուսումնարանը մի գերազանց միջոց կը լինէր, որով նրանք կը կարողանային ձեռք բերել բացի գերմանական լեզուի հմտութենից, նոյնպէս գեղեցիկ և նորընտիր ձևեր և եղանակներ դաստիարակութեան, որոնց մէջ մեր հասարակութիւնը զգում է անհրաժեշտ կարևորութիւն։ Եթէ այս իմ փոքր տեղերութենից օգուտ քաղեն մի քանիս իմ հայրենակից օրիորդներից և տիկիններից, ես ինձ փոքր ի շատէ հասած կը համարեմ իմ նպատակիս։

Մարիամ Ք....

Ց. Գ. Տարին այս ուսումնարան մտնողների համար սկսվում է և շարունակվում է Զատիկից մինչև միւս Զատիկը։ Ընդունվում են ամեն հասակի կանայք։ Հասցէն ուսումնարանի հետևեալն է՝ „Gotha, Herrn Köhler, Director der Lehrerinen-Schule.“

կանալի է, որ երբ Օսէփը թոյլ էր կատարվում, մնացած դերերը որքան և լաւ կատարվէին, զըրվածքը դարձեալ կորցնում էր իր ամբողջութիւնը։

Սունդուկեանցի նախընթաց պիէսաներում մենք արդէն տեսանք չռայլ կանայք, տեսանք հարստահարող, խաբեբայ քաղքցուն, տեսանք հին աւանդութիւններին և սովորութիւններին հաւատարիմ պառաւներին,—թէև այդ բոլոր տիպերը նոր պիէսայի մէջ աւելի կատարելագործված են և բազմակողմանի նկարագրված, տեսանք վերջապէս և անիրաւութեան, խաբեբայութեան, հարստահարութեան դէմ բողոք մի այլ շրջանի մարդի, մի ձկնորսի կողմից,—բայց ինքն փտած, ընկած, չըռայլ, կորած շրջանից դուրս եկած բողոքը, դեռ ոչ մի գրվածքի մէջ մեր հեղինակը մեզ չէ ներկայացրել։ Օսէփը, ինքն մեր անբարոյական շըրջանին պատկանելով, որտեղ ամեն բան խաբեբայութիւն է, ամեն բան արտաքուստ բարեկարգ է երևում, բայց նիւթապէս՝ դ ի փ ն ի ս ի ա է, իսկ բարոյապէս՝ դ ի փ կ ի ս ա ա, Օսէփը առաջինն է որ ինքն այդ շրջանին պատկանելով, բողոքում է իր փտած շրջանի դէմ, ինչպէս քաջ լեղնորդ կռւում է իրան տանող ջրի հոսանքի դէմ,—գիտէ որ չէ կարող հոսանքին ընդդիմանալ, և որ այդ ապարդիւն հերոսութիւնը կը տանէ նրան դէպի կորուստը՝ վերջը նրա գլուխը կամ պէտք է քարի վրա ջարդվի, կամ բրջի վրա....

Առաջին սիրողների ներկայացման ժամանակ մի քանի դերերը, օրինակ պառաւ կնոջ դերը, հիանալի կերպով կատարվեցան, բայց Օսէփի դերը թոյլ էր և այդ պատճառով ամբողջ պիէսայի նըշանակութիւնը կորչում էր։

Պ. Քիշմիշեանի Օսէփը բողոքող էր, այո, բայց նա այնպէս էր բողոքում անբարոյական հասարակութեան դէմ, որին և ինքն է պատկանում, որ նրա բողոքը, ոչ թէ կռւող հերոսի բողոք էր, այլ աւելի դանդատի նման էր։ Նա լաց էր լինում ընկած հասարակութեան գրութեան վրա, նա լացի ձայնով դանդատվում էր, այնպէս որ մտածող հանդիսականի մէջ յարուցանում էր ոչ թէ համակրութիւն, այլ նրան խղճում էին....

Զմշկեանը, ինչպէս և սպասում էինք, մարմնացրեց հեղինակի գաղափարը, նրա ձայնի մէջ բացի երբ նա բողոքովին յաղթված է, ոչ մի անգամ կոլորիտը բարձր չ, կամ որ բարձր չ պրա տասա է ընկնում, բայց նրա ձայնի, նրա ամբողջ անձի մէջ երևում է ոյժ, սառնութիւն, նա չէ ճնշվում բարոյապէս իրան անտանելի շրջանից, բայց դառն կերպով ցոյց է տալիս որ ինքն զգում է թէ իր կռիւը հասարակութեան անբարոյական հոսանքի դէմ ապարդիւն է....

Զմշկեանը իր խաղով շարժեց հանդիսականի մէջ համակրութիւն դէպի Օսէփի տիպը....

Մնացած խաղացողներից տիկին Սատինիկը աննման էր իր դերի մէջ։ Մենք երբէք չենք տեսել նրան մի դերի մէջ ամեն մի շարժմունք, ամեն մի բառ այդքան ուսումնասիրած, և մի և նոյն ժամանակ այդքան բնական....

Պառաւ կնոջ (օրիորդ Սանդուխտ) դերի ամեն մի խօսքը արձագանք էր գտնում հասարակութեան սրտում։

Մեր կարծիքով երկու բան աւելորդ էր՝ մինը անտարակներում խուլացնող երաժշտութիւն, իսկ միւսը տիկին Սատինիկի երրորդ գործողութեան, թէև գեղեցիկ երգված, տեղական երգի անդադար բիս (կրկնեա) կանչելը, որ ընհատեց պիէսայի ընթացքը։

Գ. Ա.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՔԵՐԸ

I. Ոսկի *)

Ոսկին այն մետաղներից է, որ գլխաւորապէս բնութեան մէջ գտնվում է բնածին (gediegen, самородный) կերպով, կազմելով կամ երակներ ժայռերի մէջ, կամ գտնվելով գետերից տարած աւազի մէջ։ Այս վերջին դէպքում նա կամ զանակների (блестка) ձևով, կամ ջրից կոլոլած հատիկներով է գտնվում խառնած աւազի հետ։ Նրա գլխաւոր քանակութիւնը գտնվում է Աֆրիկայում, Ունգարիայի մէջ, Ուրալի սարերում, Աւստրալիայում և Ամերիկայում։ 1867 թուին մենակ Պալիֆորնիան տուեց 100 միլլիոն ռուբլի ոսկի, իսկ Ռուսաստանը 31 միլլիոն։ Ընդհանուր քանակութիւնը ոսկու, որ ստացվեցաւ յիշված տարվայ ընթացքում, 393½ միլլիոն ռուբլի դուսմար էր ներկայացնում։

Աւազից ոսկին ստանալու համար զանազան ձևեր են գործ ածվում՝ կամ լուանում են ջրով և դորա համար աւազը զցում են թեքված տախտակների վերա—բայց այս ձևով երբէք իստակ ոսկի չէ ստացվում, այլ ոսկու հատիկների հետ մնում են և երկաթի և այլ մետաղների հատիկներ։ Աւելի յարմար միջոց է աւազից սնդիկով դուրս քաշել ոսկին, որ լուծվում է սնդիկի մէջ։ Դորանից յետոյ այս խառնվածը, որ ամալգամ է *) անուանվում, ածվում է կաշուց շինած քսակների մէջ և սեղմվում է, որ ազատվի աւելորդ սնդիկից, իսկ մնացած պինդ դարձած ամալգամը տաքացվում է երկաթի անօթների մէջ մինչև որ սնդիկը բոլորովին գոլորշանայ։ Վերջապէս կայ երրորդ ձև, որ դորանումն է բաղկանում, որ աւազը ամբողջութեամբ լցվում է բարձր հնոցների մէջ և այնտեղ հալվում է։

Պլատնէր, Ֆրայբերգի հանքաբանական ձեմարանի նախկին պրոֆէսսորը, առաջարկեց քիչ ոսկի պարունակող հանքերի համար գործածել հետևեալ մեթոդը, որ ուրիշներից դեռաւանցում է։ Հանքը ենթարկվում է քլորի ջրի ներգործութեան. այդ դէպքում լուծվում է ոսկին և մետալական մրուրի ձևով նստում է, եթէ լուծվածքի մէջ զցվի երկաթի արջասպ (Eisenvitriol, желѣзный купоросъ)։ Այս մեթոդով պ. Ալլէն (Allain) հանքից հանում էր ոսկու $^1/_{10\cdot000}$ մասը։

Ոսկին իստակ, անխառն դրութեան մէջ շատ փափուկ է և շատ աւելի պինդ չէ կապարից, բայց նա ձգուն է և այդ պատճառով [illegible] գործածելու ժամանակ աւելացնում են մի փոքր քանակութիւն արծաթի կամ պղնձի։ Ոսկու գեղեցիկ դեղին գոյնը ամենքին յայտնի է, բայց ոսկու բարակ թերթիկների միջով անցնող լոյսը կանաչ կամ կապոյտ գոյն է ստանում։ Ոսկին հալչելու համար հարկաւոր է շատ մեծ տաքութիւն՝ 1037°C.

Դրամների համար գործածական ոսկին պարունակում է կէս ֆունտի վերա (որ հաւասար է 24 կարատի) 21½ կարատից սկսած (Ֆրանսիական քսան—Ֆրանկանոցներ) մինչև 23¾ կարատ (աւստրիական դուկաններ) իստակ ոսկի **) մնացածը արծաթ և պղինձ է։

Ոչարդարանքների ոսկեղէնները այնքան հարուստ չեն ոսկով՝ նրանք պարունակում են կէս ֆունտի վերա 6—18 կարատ։

Ոսկու գործածութիւնը բաւականին բազմատեսակ է՝ նրան բացի դրամների և զարդարանքների համար գործ են ածում ոսկեզոցելու համար և նոյնպէս ապակին կարմիր գոյնով ներկելու համար և վերջապէս լուսանկարչութեան մէջ։

Կովկասում մինչև այժմ չէ յաջողվել ոսկի գտնել մեծ քանակութիւններով, և այս պատճառով այս թանգագին մետալի մշակութիւնը մեզանում ոչ միայն երկրորդական դեր է խաղացել, այլ և համարվել է աւելի մեծ ծախսեր պահանջող, քան թէ օգուտ բերող։ Սրանից մենք չը պէտք է եզրակացնենք, որ մեր երկրում փոքր է ոսկու քանակութիւնը—այդ չէ պատճառը, այլ երկրի ձևի անյարմարութիւնը։

Մեզ անգամ որ գտնվել է ոսկի Կովկասում դա եղել է գետերի աւազի մէջ, երբեմն բաւական մեծ հատիկներով։ Այսպէս նշանակել են ոսկու ներկայութիւնը Ալէնջի չայ գետակի մէջ, որ ընկնում է Երաքսը, Աղստաֆայի մէջ, և այլն։ Այս երկու անուանած գետերից փորձել են ոսկին հաւաքել, բայց լուծքի փորձեր անելուց յետոյ, համոզվեցան որ եկամուտը չի ծածկի հարկաւոր ծախքերը։

Այս երկու դէպքերումն էլ երկրի ձևի անյարմարութիւնն է, որ ոսկին հաւաքելու աշխատանքը ապարդիւն է դարձնում։ Կովկասը առհասարակ լեռնոտ երկիր լինելով, նրա գետերը գրեթէ ոչ մի տեղ հանդարտ հոսանք չունին, որովհետև նրանց հատակը շատ թեքված է և ուրեմն յատակի վերա անկարելի է որ մնան և մանաւանդ տարիներով հաւաքվեն աւազի մասնիկներ, ժամանակով բաւականին հաստ խաւեր կազմելով։ Գարնան հեղեղների ժամանակ աւազը, ժայռերի մանրացած մասերը թէև տարածվում են աջ ու ձախ և ջուրը նուազվելուց յետոյ աւելի կամ պակաս հաստութեան խաւեր են կազմում, բայց, մի նոր հեղեղ գալով, կրկին բոլորը իր հետն է տանում։ Այստեղ կրկին երկրի ձևն է պատճառ, որովհետև հովիտներ չափազանց նեղ լինելով ամեն հեղեղի ժամանակ ամբողջապէս լցվում են ջրով։

Ուրիշ երկիրներում, որտեղ արդիւնաւոր է համարվում ոսկի պարունակող աւազը լուանալու, մի կողմից մակերևոյթի այնքան մեծ տարբերութիւններ չը կան ինչպէս Կովկասում, և ուրեմն գետերը չունեն այնպիսի մեծ անկումն, միւս կողմից հովիտները աւելի լայն լինելով, նրանց մէջ դարերով հաւաքվում էր աւազը։ Ուրեմն մեզ մօտ որքան էլ մեծ լինէր ոսկու քանակութիւնը, նա մեզ համար չէ կարող պիտանի դառնալ, այլ ամբողջութեամբ հարստացնում է Սև և Կասպից ծովերի խորքերը, կամ մնում է Կուրի, Երաքսի և Ռիոնի յատակի վերա այն տեղերում, ուր այդ գետերի հոսանքը հանդարտ է դառնում։ [illegible] ոսկին նոցա մանահնեների համար ապարդիւն մի հարստութիւն է։

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեռ այն ժամանակ, երբ նահանգական կառավարութիւնը գտնվում էր Շամախում, Բագուն ունէր մի շատ համեստ դրութիւն միւս քաղաքների համեմատութեամբ։ Սրա վերա այնքան ուշք ու միտք չէր դարձնվում, որչափ Շամախու, որ կեդրոն էր համարվում բոլոր նահանգական գործունէութեան։ Հայոց տարրը, որ այժմ էլ Շամախում բաւականին զօրեղ է, այն ժամանակ առաջին տեղն էր բռնում բոլոր նահանգում։ Ուսումնարանները, թէև անբաւարար, բայց կային. հոգևորականութիւնը, թէև անզգոյշ, բայց կազմում էր մի զօրեղ կուսակցութիւն։ Միւս քաղաքներին պատկանում էր ամենահամեստ դրութիւն, ի թիւս որոց և Բագուին։—Բայց այս վերջինին վիճակուած չէր մնալ միշտ այդ երկրորդական դրութեան մէջ. նա պէտք է անպատճառ մէկ օր գլուխ բարձրացնէր և կանգնէր բոլոր նահանգի վերա։ Պատճառները պարզ էին։ Ծովագնացութիւնը և վաճառականութիւնը օրստօրէ յառաջ էր գնում։ Ռուսաստանի յարաբերութիւնը Պարսկաստանի և Թուրքմէնի հետ մեծանում էր։ Գազի գործածութիւնը, գործարանների շինութիւնը—ակնայայտ քարշում էին և ձգտում դէպ ինքն նահանգի թէ երեւելի ներկայացուցիչներին և թէ առհասարակ վաճառականներին։ Իսկ Շամախին ընդհակառակը—ցածանում էր, որովհետև չանս չունէր աւելի բարձրանալու. երկրաշարժութիւնը կոտրում էր նրա նշանակութիւնը և զինը... Այդ բոլորը վերջացաւ նրանով, որ նահանգական կառավարութիւնը հրաժարական տուեց Շամախուն և ուղղուեց ծովափ։ Կառավարութեան հետ տեղափոխուեցան և շատ ուրիշ մարդիկ զանազան գործերի։ Դրանց մէջ կային բաւականին և հայեր, որոնց մէջ գտնվումէին ի հարկէ և մի քանի խելօք մարդիկ։

Մեք մեր ուշքը դարձնենք միայն մեր հայերի վերա և այն էլ միայն մի ուղղութեան մէջ։ Մի քանի խելօք մարդիկ գտան Բագվում—բաղուցիներին (հայ) քիչ թւով, մօտ 60 տուն։ Դրանք հին գաղթականներ էին 50—100—200 տարի այն ժամանակից առաջ տեղափոխուած Հնդկաստանից, Պարսկաստանից կամ Կովկասի միւս տեղերից։ Նրանց կրթութեան մակերևոյթը գտնվում էր շատ քաչ. իսկ ինչ վերաբերում էր ընտանեկան յարաբերութեանց, շատ քիչ էին զանազանվում թուրքերից։ Նախապաշարմունքներ, ամենաչարաչար մոտիաբանութիւններ, շատ աւելորդ ծիսակատարութիւններ և հարուստ ձիրք բամբասանաց ու չարախօսութեան—ահա յատկանիշ գծերը բագուցիների *).... Նրանց մէջ կային մէկ-երկու մատաղահաս երիտասարդներ առաջին կամ երկրորդ դասատան կուրս ստացած և մի քանի մանուկներ էնցիկլօպեդիստ—տիրացուների հսկողութեան տակ....

Մի քանի մարդիկ խկոյն զգացին այն հասարակական շինուածքի նորոգութեան կարեորութիւնը, որի մէջ նրանք պէտք է ապրէին։ Մարդասիրական զգացմունքը խօսեց նրանց հոգու մէջ և նրանք մտածեցին մի երկայն և մեծ բան—կազմել ներկայ գանվողներից մի ընկերութիւն և մեծացնել ու ընդարձակել նրան, հրաւիրելով բոլոր ազգի մասնակցութիւնը և օժանդակութիւնը։ Սկզբնական նպատակն էր լինել տարածող կըրթութեան և լուսաւորութեան միայն Բագուի մէջ, բայց իսկոյն երևաց մի նոր աւելի դրաւիչ, բայց անհիմն նպատակ—լինել առաջնորդ ազգի ծաղկման և ուման, լինել կեդրոն Կովկասեան ուսման.... Այս վերջին նպատակով ճանաչուեցաւ այդ ընկերութիւնը բոլոր Կովկասի մէջ և ամենայն քաղաքում։ Ընկերութիւնը ինքն կամաւ ընդունեց այդ տիտղոսը և ճշմարիտ, որ կամեցաւ գործ դնելու իւր ոյժը նրա համեմատ։ Բայց իսկ այն օրից տեսաւ, որ բաւականին հեռացել էր նա սկզբնական նախագծից. յետ կենալ իւր վերջին խօսքերից չէր կարող և չէր կամենում էլ, իսկ առաջին նախագիծը նրան երևում էր շատ փոքր և նեղ։ Այդ է գլխաւոր պատճառը, որ մինչև այժմէլ ընկերութիւնը չը կարողացաւ վերջնական մի ուղղութիւն տալ իւր գործունէութեան. բայց ինչպէս և լինի նրա գործունէութիւնը, լաւ թէ վատ, մեք չենք կարող լռել նրա վերա։

Սկզբում նա (կարծեմ 1865 թուականից սկսած) ունէր տղայոց ուսումնարան քաղաքի եկեղեցւոյ մօտ, ուրտեղ հրաւիրուած էր մի շատերին ծանօթ երիտասարդ Թիֆլիսից... բայց 1868 թուականի մօտերքում ուսումնարանը պէտք է փակուէր զա- [illegible] ինքն առանձին ունենալ իւր ուսումնարանը, որ և կարգեց 1869 թուականից։ Փոքր ժամանակից յետոյ նա ընկաւ ընկերութեան ապահովութեան ներքոյ, տեղափոխուելով նրա սեպհական շինութիւնը, իսկ կառավարուելով ժողովրդեան փողով, ինչ դրութեան մէջ է և այժմ։

Ընկերութեան տղայոց ուսումնարանի համար ունեցած գործերի վերա մեք շատ կարճ անցկացանք, որ խօսենք օրիորդաց ուսումնարանի վերա, որովհետև օրիորդաց ուսումնարանը անկախ ժողովրդից գտնվում է նրա կատարեալ հսկողութեան և ապահովութեան ներքոյ—ուրեմն մի այնպիսի հաստատութեան վերա, որի վերա կեդրոնացած էր նրա բոլոր ուշադրութիւնը։ Մինչև ուսումնարան սկսելը երկու երեք տարուց ի վեր ընկերութեան անդամները ամենաակերպ աշխատում էին ժողովրդեան ծանօթացնել և ընդելացնել դէպի այս հաստատութիւնը։ Աղջկերանց մայրերը ամենակերպ հակառակում էին։ Վերջապէս 1869 թուականին, դեռ ընկերութեան նախագահ Դաւիթ Ռոստոմեանցի կենդանութեան ժամանակ, հաստատուեցաւ օրիորդաց ուսումնարանը, որտեղ ժողովուեցին մինչև 10—16 աշակերտուհիք։ Ուսուցչութիւնը, գտնվելով ռուս վարժուհոյ ձեռքի, չը կարողացաւ շոշափելի օգուտ տալ. վանորայ մէկ տարուց յետոյ հրաւիրուեցաւ, պ. Հայրապետ Քալանթարեանցը իւր ամուսինով։ Երկու տարի շարունակաբար ուսումնարանը դրանց հսկողութեան տակ գնում էր բաւականին յաջող—այնպէս որ մեք առանց չողոքորթութեան կարող ենք խոստովանել, որ ուսումնարանի ամենարարեկարգ և ամենալաւ դրութիւնը դրանց ժամանակն էր.... Բայց ընկերութիւնը միւս կողմից ունենալով շատ ուրիշ ծախսեր, պարտաւորուած էր առաջարկել պ. Հ. Քալանթարեանցին համաձայնուիլ քիչ ռոճկի։ Վերջինս, առաջարկած ռոճիկը գտնելով շատ անբաւարար, չը համաձայնուեց և հրաժարական տուաւ։—Մի տարի չը տևեց և պ. Հ. Քալանթարեանցը ստանալով գլխաւոր տեսչից իրաւունք, բացաւ երկսեռ ուսումնարան տղայոց և օրիորդաց։—Այնպէս որ այժմ գտնվում է Բագվում ընկերութեան օրիորդաց ուսումնարանը, ծիսական դպրոցը (նրա հովանաւորութեան ներ-

---

*) Այս վերնագրով պէտք է տալի յօդուածների մի շարք, որոնց մէջ կը նկարագրվեն կարճ կերպով Կովկասի մէջ գտնվող գլխաւոր հանքերի տեսակները, նրանց գործադրութիւնը արուեստագործութեան մէջ և ընդունված ձևերը նրանց մշակութեան համար։

*) Ամալգամ անուանում են բոլոր մետալների լուծվածները սնդիկի մէջ։

**) Ռուսաց պօլուիմպերիալների մէջ 24 մասի վերա 22 մաս ոսկի է։

*) Այդ դրութիւնը շատ քիչ փոփոխութիւններով նահապետական յամառութեամբ շարունակվում է մինչև այսօր։

քոյ), և պ. Հ. Քալանթարեանցի զրաղիտական ուսումնարանները....

Այստեղ խօսքներս պէտք է փոքր ինչ փոխենք և նկատենք մի շատ նշանաւոր բան։ Ընկերութեան վերջին հինգ տարուայ ջանքը և Բագուցւոց յամառութիւնը չը կարողացան միմեանց յաղթել. վերջինս ամենայն կերպ կարողացաւ դէմ դնելու ընկերութեան խրատներին, խնդիրքներին և աղաչանքներին։ Օրիորդները ուսումնարան չէին գալիս, երբ տան մի առանձին գործ կար, ուսումնարանից յետ էին կանչում, երբ իրանց տունը հիւր էր գալիս. և այլն։ Ընկերութիւնը, որ սկսած էր ուսումը ձրիաթոչակ—մտածեց նշանակելու մի թեթև թոչակ, որ գոնէ փողին ափսոսալով աղջկերանց կանոնաւոր կերպով ուսումնարան ուղարկեն. բայց ոչինչ լաւ ելք չերևեցաւ։ Ժողովուրդը կրուստ չը համարեց այն, որ աղջիկը կը մնայ անկիրթ և պատրաստ էր վնասվելու...

Այս մեր յօդուածով մեք չենք կարող ասել, որ ընթերցող դասին տուինք մի պարզ գաղափար թէ ընկերութեան, թէ ուսումնարանների և թէ ժողովրդեան դրութեան վերա—ոչ, չը տուինք. բայց մեր նպատակն այդ էլ չէր. մեք այս ամենը ասացինք պարզելու համար մի հարց, որոյ առիթով այստեղ խօսացվում է մի քանի անկիւններում։ Ահա նա։

Ընկերութիւնը այս տարուայ հարցաքննութիւններից չը մնալով շատ զոհունակ և շնորհակալ, ունենալով աչքի առաջ այն ակներև փաստը, որ քաղաքում ստեղծուած է ուրիշ ուսումնարան, որ ձգել է դէպի ինքն բաւականին աշակերտուհիք, որ ուսումնարանի վերա գնում է ահագին ծախք, չունենալով ցանկացեալ օգուտը—այժմ համարում է աւելի լաւ, բացի մի քանի որդեգիրներ պահելուց ըստ առաջնոյն, կեղրօնացնել իւր գործունէութիւնը բոլորովին անկիրթ և անուսում գիւղացիների մէջ և այդտեղ մսխել օգտով նոյն տարեկան ծախսը։ Նպատակը պէտք է լինի—հաստատել գիւղերում ուսումնարաններ, օգնել նիւթապէս և մտաւորապէս և զուգնթաց ընդելացնել ժողովրդին—նիւթական զոհերին և ծախսերին նոր սերնդի ուսման համար։ Այն գիւղացի աշակերտները, որոնք ընդունակ կը գտնուին օգտնել միջակ կամ կատարեալ ուսումնառութեան հասնելու, կամ մտցնել քաղաքում մի բարեկարգ գործարան և կամ յանձնել արհեստաւորի, կամ գտնել սաների համար բարերարներ—տարածել ժողովրդեան մէջ կրթութիւն, բաժանելով ձրի թէ ուժանդին հետ և դիւրըմբռնելի գրեանք և պատրաստելու, եթէ կարելի է, ուսեալ երկրագործներ։ Քաղաքում նրա գործունէութիւնը կը կայանայ որդեգիրներ պահելում. տասն աղքատ աշակերտուհիք գիջողութեամբ կտայ պ. Հ. Քալանթարեանցի ուսումնարանը, որտեղ մի քանի ժամանակ վարժուելով կամ կդառնան վարժուհիներ գիւղերի համար նշանակեալ ռոճկով, կամ կշարունակեն ուսումը բարձր ուսումնարաններում և կամ վերջապէս հենց կդառնան խելօք ամուսիններ և մայրեր։

Ընկերութեան այս նպատակը դեռ բաց չի խօսացուած. ինչպէս ասում են շուտով հոգաբարձական ժողովում խօսելու են այդ բանի համար։

22 Նոյեմբ. 1874 թ. *—*

ՆԱՄԱԿ ՔՈԻԹԱՅԻՍԻՑ

Ուխտագնացութիւնը, ինչպէս երևում է եկեղեցական պատմութիւնից, կարելի է համարել քրիստոնէական ամենահին սովորութիւններից մէկը, որ մինչև այսօր էլ շարունակվում է, մանաւանդ մեր մէջ։ Արդեօք հին ժամանակները այդ սովորութիւնը ինչ նշանակութիւն ունէր քրիստոնեայ ազգերի համար, և այժմ տեսնենք ինչ նշանակութիւն է ստացել։ Եթէ ասենք ուխտագնացութիւնը այն նշանակութիւնն է ունեցել քրիստոնեայ ազգերի համար, ինչ նշանակութիւն Յունաց համար օլիմպիական խաղերը, մի գուցէ սխալուենք, որովհետև այժմեան ուխտագնացութեան նայելով՝ ոչինչ նմանութիւն չենք գտնում այս երկու սովորութեանց մէջ. իսկ եթէ ասենք ըստ ժողովրդեան հասկացողութեան համարվում էր և համարվում է աստուածահաճոյ գործ կամ աստուածապաշտութիւն, մի գուցէ զարձեալ սխալուենք, վասն զի այժմեան ուխտագնացութիւնը չէ պարունակում իւր մէջ այդ միտքը։

Ինչպէս ուրիշ տեղերում, նոյնպէս և այստեղ ուխտ են գնում զարնանը, այսինքն զատկին, և աշնանը։ Ուխտաւորները ըստ մեծի մասին ամուլ ամուսիններ են լինում, որոնք իւրեանց երևակայական ցանկութեան հասնելու համար, գալիս են Ս. Գէորգայ Նորակառոյց եկեղեցին ամենայն պատրաստութեամբ ուտելիքով և ըմպելիքով և անկողիններով։ Եւ որովհետև եկեղեցու գաւթում պատրաստի սենեակներ չկան, տեղւոյս բարեկարգիչ Տէր Դաւիթ Եարալեանցի թոյլտվութեամբ գիշերները անցուցանում են նոյն սրբազան վայրում, ուր անկարդ ուտելուց և խմելուց յետոյ, այդ ջերմեռանդ ուխտաւորները սկսում են թուղթ խաղալ, կաքաւել և ապա թէյ խմել։ Այստեղ ինքն ըստ ինքեան մի հարց է յառաջ գալի. եթէ ուխտաւորները յիրաւի գալիս են եկեղեցին Աստուծոյ տունը որ և իցէ ակնկալութեամբ մխիթարութիւն գտնելու համար, այն ժամանակ նոքա պէտք է ջերմեռանդութեամբ ուխտ անելուց յետոյ, քաջուբէին իւրեանց տները, որք եկեղեցուց հեռու չեն, որովհետև բոլորն էլ քուրդիսարնակ Հայեր են։ Բայց եթէ կամենում են անպատճառ եկեղեցու մօտ անցուցանել գիշերները, այն ժամանակ կարող են եկեղեցու գաւթում գտնուող հոգևոր դպրոցի դատարկ սենեակներում անցուցանել. իսկ եթէ այդ ուխտաւոր հռչակուածները գալիս են միայն զուարճութեանց համար, այն ժամանակ կարող էին այնպիսի տեղ ընտրել, ուր թոյլ է տրուած, օրինակ՝ պանդոկներում և միկիտանխաններում։

Կասկած չկայ, որ այսպիսով եկեղեցին իւր յարգը և նշանակութիւնը կարող է կորցնել հասարակ ժողովրդեան առաջև, եթէ այս անկարգութեանց առաջը չուտով չառնուի. ուստի հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը այս կէտի վերա, և յոյս ունենք, որ նա տնօրէնութիւն կանէ։

11-ն դեկտ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք կայսերական ռուս աշխարհագրական ընկերութեան կովկասեան բաժնից մի աւելուած բաժնից հրատարակվող «Տեղեկութիւնների»։ Այդ աւելուածը պարունակում է իր մէջ զալու 1875 թուին Փարիզում լինելու միջազգային աշխարհագրական կոնգրէսի մասին տեղեկութիւնները։ Կոնգրէսի ժամանակ լինելու է Փարիզում և աշխարհագրական հանդէս, որտեղ ամեն ազգերը ներկայացնելու են՝ մաթեմատիկական, աշխարհագրական, ազգագրական իրեր, նոյնպէս աշխարհագրութեան դասաւորութեան վերաբերութեամբ առարկաներ։

***

Լսում ենք որ Լրտես թերթը, յայտարարելով տուել ձայնաւորների ընդհանուր ժողովին, որ համաձայնվում է կրկին Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնը ընդունել։

***

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Կ. Պոլսից պ. Գ. Վ. Սրուանձտեանի «Գրոց ու բրոց և Սասունցի Դաւիթ, կամ Մհերի դուռ» վերնագրով գիրքը։

***

Խմբագրութիւնս ստացաւ «Դաւի-Դառաբա, կամ մի հարսանիք» (գիւղական թատրոն չորս գործողութեամբ) վերնագրով գիրքը։ Գրքի գինը 50 կոպէկ է։

***

Մեզ գրում են Քուրթայիսից։ Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, 1873 թ. մայիսի 17-ին, թատրօնական ներկայացումն եղաւ յօգուտ Քուրթայիսի ապագայ օրիորդաց ուսումնարանի, և այս ներկայացումից հանած բոլոր ծախսերը, մնաց զուտ արդիւնք 200 ռուբլի։ Բայց ցաւօք սրտի պիտի ասած, որ այսօր ոչ յիշեալ ուսումնարանը կայ, ոչ էլ յայտնի է, թէ այս դրամագլուխը ինչ եղաւ։ Բացի սորանից երեք ներկայացումն ևս եղած են, դարձեալ յօգուտ անյայտ ուսումնարանի և դոցանից ստացած փողերը նոյնպէս չը գիտենք ինչ եղան....

***

Ստացանք «Հայկական Աշխարհ» ամսագրի 6 և 7 տետրակները միասին ամփոփած։

***

Կիրակի օր, դեկտեմբերի 15-ին Թիֆլիսի Կրուժոկը տօնեց իր հինգամեայ գոյութեան տարեդարձը։

***

Թիֆլիսի կլուբը (Մուխրանսկու տանը), որտեղ անդամները մեծ մասամբ տեղացիք են, մինչև այժմ չէր ներկայացնում մեր ընտանիքների համար մի որ և է հասարակական կենտրոն։ Մինչև այժմ միայն տղամարդիկ էին հաւաքվում այդտեղ թուղթ խաղալու համար, իսկ նրանց կանայքը և աղջիկները տանն էին նստած... Այժմ նկատվում է մի նոր ուղղութիւն այդ կլուբի մէջ։ տեղական ընտանիքները սկսեցին այդ ձմեռը յաճախել կլուբը, որտեղ լինում են ընտանեկան երեկոներ։ Ասում են որ կանանց հագուստները հակառակ Կրուժոկում ընդունված սովորութիւններին, լինում են շատ հասարակ և երեկոների մէջ տիրում է ճշմարիտ ընտանեկան բնաւորութիւն....

***

Ռուս լրագիրները հաղորդում են որ Թէոդոսիայում նորերուստ բացվեցաւ ուսուցչական դպրոց։

***

Դեկտեմբերի 6-ին վախճանվեցաւ Թիֆլիսում վրացի աստիճանաւոր Յովսէփ Մամացեվ։ Նա հին մարդ էր, նրա գործունէութիւնը կովկասեան հասարակական կեանքի մէջ սկսվում է դեռ քառասուններորդ թուականներից,—բայց նա հաղագիւտ հին մարդիկներից էր։ Մենք անձամբ ճանաչում էինք հանգուցեալին և միշտ զարմանում էինք նրա թարմ դատողութեան վրա, և այն քանի վրա թէ որքան նա համբերող էր դէպի նոր առաջադէմ մտքերը, որքան սիրում էր չըջապատել իրան երիտասարդներով։ Ոչինչ նոր միտք, նոր սկզբունք չը կար, որին նա սրտով չը համակրէր։ Բոլոր ընկերութիւնների անդամ, ամեն տեղ մեծ եռանդով մասնակցելով, մի և նոյն ժամանակ նա մեր ծերերի մէջ մի պայծառ բացառութիւն էր։ Նա իրան նպատակ էր դրել քարոզել ուսումնարանի գաղափարը ժողովրդի մէջ և նպաստեց շատ ուսումնարանների հիմնելուն վրաց գիւղերում։ Իսկ իր ընտանիքի մէջ նա քարոզիչ էր (և իրագործեց էլ) անհատի ազատութեան և մարդիկների հաւասարութեան գաղափարի։ Մենք չենք խօսում նրա անբիծ պաշտօնական ծառայութեան վրա, որ իւրաքանչիւր ծառայող մարդի առաջին պարտաւորութիւնն է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամբողջ Գերմանիան զբաղված է այժմ գրաֆ Արնիմի պրոցէսով, որ սկսվեցաւ Նոյեմբերի 27-ին։ Գրաֆին պաշտպանելու են պ. պ. Մունկէլ, Գոլհոլն և Հոլցենդորֆ։ Մեղադրական ակտի մէջ ապացուցանվում է, որ գրաֆ Արնիմը մասնակցում էր իր յօդվածներով մի քանի թէ գերմանական, թէ օտար լրագիրներում։ Այդ յօդվածները իրանց բովանդակութեամբ, մանաւանդ Վիէննայի „Die Presse“ լրագրում տպվածները, ցոյց են տալիս այնպիսի մի մարդի գրիչ, որ տեղեակ էր բոլոր պաշտօնական գաղանիքների։ Այն պաշտօնական թղթերը, որք իբր թէ կորած են, իրանց բովանդակութեամբ ոչ թէ ինքն Արնիմի Հաշտարարական դեսպանատան առաջարկել մեղադրվածին, այլ ունեն նրա համար այն նշանակութիւն, որ աւելի միջոց կը տան նրան յարձակվել գերմանական արդեան քաղաքականութեան դէմ։—Տան և երեք լիհացի պատգամաւորներ մտցրին Բայխստագի մէջ մի առաջարկութիւն, որով պահանջում են թէ գերմանական տէրութիւնը պահպանէ այն բոլոր իրաւունքները և արտօնութիւնները, որ տուած էր նա լիհական նահանգներին, մանաւանդ ազգայնութեան և ազգային լեզուի վերաբերութեամբ խիստ օրէնքները վերցնէ։

Ֆրանսիացիներ զանազան կուսակցութիւնների մէջ երկպառակութիւնը պետական ձևի մասին շարունակվում է։ Լոնդոնի „Times“ լրագրի Փարիզի թղթակիցը հետևեալն է գրում՝ երկու երևելի դէպքեր, որք սպասվում էին, ճշմարիտ տեղի ունեցան։ Քաղաքային ընտրութեանց մէջ արմատական կուսակցութեան մարդիկը աջողութիւն ունեցան գրեթէ ամեն մեծ քաղաքների մէջ և պահպանողական օրագիրներից շատերը, մանաւորապէս բօնապարտեան և օրինաւորական ուղղութեան, այս եղելութենից այնպիսի եզրակացութիւն են հանում, որ կարող է անկողմնասէր անձին ապշեցնել։ Երբէք, աղաղակում է յիշեալ լրագիրներից մինը, ընտրութիւնները աւելի ազատալի արդիւնք չեն ունեցել, որովհետև արմատական կուսակցութիւնը ամեն տեղ յաղթական է. կարմիր դրօշակը միանգամայն պարզուած ենք տեսնում.... մենք կորչելու վերա ենք...։ Ինչպէս երևում է Ֆրանսիան դեռ հեռու է հանդարտ և հաստատուն քաղաքական դրութեանը հասնելուց։

Եթէ լրագիրներին հաւատանք, շուտով գումարվելու է ԱՆԳԼԻԱՑՈՒՄ կաթոլիկների ընդհանուր ժողովը, Պատիկանի եկեղեցական կառավարութեան հրամանով։ Յիշեալ ժողովի մէջ, ասում են, պիտի գտնվին երկրագնտիս ամեն կողմերից եկած Պիոս IX-ի հաւատարիմ որդիքը։ Լոնդոն մայրաքաղաքն է ընտրվել իբրև երկիր հրապարակախօսութեան և կաթոլիկները կամենում են օգուտ քաղել Անգլիայի ազատ մամուլից, որ յայտնեն աշխարհին հին կաթոլիկութեան ճշմարտութիւնները։ Ժողովի մէջ կը բացատրվի պապութեան անսխալութեան վարդապետութիւնն և նորա հոգևոր և աշխարհական իշխանութեան հարկաւորութիւնը.... Ասում են որ ժողովը կը հրաւիրէ մնացած քրիստոնէական դաւանութիւնները հնազանդել պապի անսխալութեան վարդապետութեանը....

Գերմանական „Norddeutsche Allg. Ztg.“ հաղորդում է, որ ԻՏԱԼԱԿԱՆ ազգային պատգամաւորների ժողովի մէջ նորերումս մտցընվեցաւ մի ծրագիր նոր զինուորական օրէնքի մասին, որ ըստ սկզբին հիմնվում է ընդհանուր զինուորագրութեան գաղափարի վրա։ Ծրագիրը առաջարկում է գերմանական Լանդվէրի պէս երկրի պաշտպանութեան ընդհանուր զինուորագրութեան եղանակը մտցնել և Իտալիայում։ Իտալական „Opinione“ լրագիրը յոյս է յայտնում, որ պարլամէնտը չի ուշացնի մի ընթացք տալ յիշեալ պրօէկտին, որ իրագործվելով, մի նոր կեանք պիտի տայ Իտալիային։

ԹԻՒՐՔԻԱՑԻՑ հաղորդում են անգլիական „Times“ լրագրին, որ Կ. Պոլսի մէջ գտնվող աւետարանական ընկերութեան պատգամաւորութիւնը դիմեց կառավարութեանը, խնդրելով Սուլթանից մասնաւոր տեսակցութիւն։ Տէրութիւնը պատասխանեց, որ Թիւրքիայի քաղաքականութիւնը հպատակ քրիստոնեաների վերաբերութեամբ փոխված չը լինելով, նա աւելորդ է համարում աւետարանական ընկերութեան միջամտութիւնը տէրութեան և հպատակ քրիստոնեաների յարաբերութիւնների մէջ, ուստի չէ էլ կարող խոստանալ տալ մի տեսակցութիւն նորին մեծութեան Սուլթանի հետ։— Անգլիական „Daily News“ լրագրին հաղորդում են, որ անգլիական դեսպան Կ. Պոլսում գանգատվել է բարձր. Դրանը, թէ Թիւրքաց ածիկական երկիրներում սարուկների առուտուրը աւելի և աւելի է ընդարձակութիւն ստանում։ Մեծ վիզերը խոստացաւ որ պիտի աշխատէ գործ դնել խիստ միջոցներ, այդ թշուառ առուտուրին առաջն առնելու համար։

ՎԵՆԵՏԻԱՑԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐԸ

Վաղուց 'ի վեր գրեթէ ընդհանուր կարծիք կար ազգի մէջ, թէ Վենետիկի Մխիթարեանք Հայ-կաթոլիկ կղերի ազատամիտ, կամ գոնէ համեմատաբար նուազ մոլեռանդ մասն են կազմում։ Այս կարծեաց սխալ լինելը, որ 1853 թուին առաջին անգամ հասկացուած էր, այս օրերս կրկին հաստատութիւն է գտնում Հասունեանց և Հակահասունեանց մեծ կռիւ առիթով, և բնաւ երկբայութիւն չէ թողնում, որ կաթոլիկ կղերի ամենից մոլեռանդ կամ նախապաշարեալ մասը՝ Բոլէճցիներից յետոյ, Վիէննայի և Վենետիկի Մխիթարեանց մէջ պէտք է պտռի։

Անցեալները Վենետիկի Մխիթարեաններից Օլդուճեան հայր Յովհաննէս վարդապետը վախճանելով, 'ի մեծ զարմանս կաթոլիկ հայոց լուսամիտ մասին, տեսնուեցաւ որ յիշեալ վարդապետը վախճանին մօտ լատին կրօնաւոր մի կանչել տալով, Հասունեանի դէմ ապստամբված լինելու վրա գրով ղղում յայտնել է և մեղայ գոչելով, թողութիւն խնդրել է պապից։

Այս օրերս էլ Հիրմիզեան Եդուարդ գերապայծառի մէկ յայտարարութիւն ենք տեսնում, որով յիշեալ գերապայծառը պապի անսխալականութիւնն ընդունելով, նորա ամեն հրամանաց և ակնարկութեանց, ինչպէս նաև Բէվերսուրուս անուն կոնդակի մէջ պարու-

նակված հրամանաց և կանոնաց ամենահնազանդ և ամենահլու հաւատացեալն է դաւանում իրան, և Հայաստանեան կաթոլիկ հայերին իբր հիրաւուածող և մոլորեալ է դատապարտում։

(Մասիս)

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

Քաղաքիս Շ... թաղումը կէս գիշերին մի քահանայի դուռը զարկում են երկու մարդիք. տէրտէրն դուրս են կանչում, ասելով, թէ այս ինչ պարոնը մերձ ի մահ հիւանդ է և հրաւիրում են հաղորդել նրան։ Քահանան, լսելով հարուստ պարոնի անունը, չտապում է դէպի հիւանդի տունը, որի բաւականին հեռու էր իւր բնակարանից։ Երկու մարդիքը վառած լապտերով առաջնորդում են տէրտէրին։ Անցնելով մի նեղ և խուլ փողոցով, նրանք լապտերը հանգցնում են, և բռնելով տէրտէրի ընչափոցից, ասում են՝ «դէ, ինչ ունես չուռնես տուր, թէ չէ հոգիդ կառնենք»։ Տէրտէրի մօտ գտնուած արծաթը ընդամենը մի քանի ռուբլի է լինում, տալիս է աւազակներին և ազատվում։

***

Նորերումս «Մանզումէի Էֆքեար» Կ. Պոլսի լրագրի մէջ տպվեցաւ պ. Ս. Ամերիկեանի յօդվածը, որտեղ հեղինակը շատ ծանրակշիռ խորհրդակցութիւններ է անում թատրոնի նշանակութեան վրա առհասարակ և հայոց թատրոնի վրա մասնաւորապէս։ Մեր կովկասեան հայոց բէպերտուարից ամենից բարձր դասում է նա պ. Գ. Սունդուկեանցի գրվածները, որք ժողովրդական ոգուն յարմար գրված լինելով, մի և նոյն ժամանակ ձևի կողմից հետևում են եւրոպական բեմական գրվածներին։ Պ. Ամերիկեանը յայտնում է իր յօդվածի մէջ որ իրան աջողվել է մի թատրոնական ընկերութիւն կազմել Կ. Պոլսի մէջ։

***

«Մասիս» լրագրի մէջ կարդում ենք՝ «Բարձ. Մայր Թագուհին հրաման ըրաւ որ Գրբմէն 3000 զոյգ հէն գնուին իւր ծախքով. և Անատոլուի սովեալ երկրագործաց բաժնուին ձրիապէս»։

***

Դեկտեմբերի 16-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվում էր իշխան Չէլօկայեվի գործը, որ մեղադրվում էր իր կնոջ հետ բռնաւոր կերպով վարվելում։ Այդ գործը կարծեմ 1868 թուին է սկսվել և անցեալ երկուշաբթի օրն էլ կանչվեցան անթիւ վկաներ, թէ Թիֆլիսից, թէ այլ քաղաքներից, բայց դատաստանը յայտնեց որ գործը յետ է գցվում յունվարի 10-ին։ Հէնց որ դատաւորները հեռացան, Վախվախովը, նորահաս կնոջ եղբայրը, յարձակվում է Չէլօկայեվի վրա, և սաստիկ վիրաւորում է նրան խանջալով։

***

«Քանդած օջախ» պիէսայի ներկայացման ժամանակ երևանցի Ալէքսանդր Թաիրովը, որ վերցրել է առաջին կարգի մի աթոռի տոմսակ, երևի իր արհամարհանքը դէպի հայոց թատրոնը ցոյց տալու համար, ուղարկում է իր ծառային վերցրած տոմսակով,—և սա փառաւոր կերպով նստում է աթոռների առաջին կարգը։

***

Ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում ներկայ համարի բանասիրականի մէջ տպված տիկին Մարիամ Ֆ.... ի նամակի վրա, որ ուղարկված է մեզ գերմանական Գոթա քաղաքից։

***

Երկուշաբթի օր, դեկտեմբերի 16-ին Թիֆլիսի երաժշտական ընկերութեան մէջ կար առաջին անդամական կոնցերտ։

***

Մենք զարմանում ենք, որ մինչև այժմ չեն դումարում ձայնաւորների ընդհանուր ժողովը, քաղաքային վարչութեան անդամներին ընտրելու նպատակով։

***

Ռուս „Всемірная Иллюстрація“ պատկերազարդ շաբաթաթերթի մէջ տպված է մի պատկեր Թիֆլիսի թատրոնի հրդեհի մասին, որտեղ նկարված են՝ բազմաթիւ հրդեհաշէջ վարչութիւն անթիւ ջրհաններով, սանդուխներով.... Ափսոս, ասում է „Тифл. Вѣстн“ լրագիրը որ պատկերի մէջ նկարագրվածը իրականութեան մէջ չը կար...

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ԼՐԱԳԻՐԸ

Կը հրատարակվի 1875 թուին նոյն պրոգրամայով, նոյն դիրքով և նոյն ժամանակամիջոցներում։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ։

տարեկան փոստով . . . . . 8 ր.
կէս տարվան. . . . . 4 ր. 50 կ.

Օտարաքաղաքացիք թող դիմեն ուղղակի հետևեալ հասցէով՝ Тифлисъ, въ редакцію „Тифлисскаго Вѣстника.“

***

ԴՐՈՒՐՍ ԵԿԱՒ

Վ. բաց լեզուով և ծախվում է

Վարդանովի և ընկ. գրավաճառանոցում

„Դրօեբայի“

ՓՈՔՐ ՕՐԱՑՈՑՑԸ

Յունաղաւանների, հայերի և կաթոլիկների համար,

գինը ամեն տող՝ 15 կոպէկ։

ԴՐՈՒՐՍ ԵԿԱՒ մամուլի տակից և ծախվում է Տփխիսի գրավաճառանոցների մօտ

Վ. աղախեցու հեղինակած

ԴԱՒԻ-ԴԱՌԱԲԱ

(Գիւղական թատրոն չորս գործողութեամբ)

(Յաւելուածով)

Գիրքը։

Գինն է 50 կոպէկ.—

Իսկ հարիւրով գնողներ համար՝—30 կոպ.

Օտարաքաղաքացիք կարող են ստանալ նմա այս հասցէով.—„Въ г. Тифлисъ.—Григорію Папянцу, ученику Армянской Нерсесянской Семенаріи“.

ԻՄ ՄԱՀՈՒԴԻ ԽԱՆՈՒԹԸ, հաշտարար դատարանի 2-որդ բաժանման դիմաց, որ գտնվում էր 11 հոկտեմբերին պատահած Թամամշօվի քարվանսարայի հրդեհից յետոյ, այդ քարվանսարայի ներքևի յարկում, №№ 26 և 27 մէջ, այժմ շինութեան մէջտեղի յարկի նորոգվելու պատճառով, տեղափոխված է իմ առաջ ունեցած խանութները, այն է №№ 22 և 23։ Սորա մասին պատիւ ունեմ յայտնել յարգոյ հասարակութեանը։

1 (3) Ստեփան ԻԶՄԻՐՕՎ

Եկող 1875 թուին

Վ. բաց ԴՐՕԵԲԱ լրագիրը

Կը հրատարակվի երեք անգամ շաբաթը [illegible] կը լինի։

Լրագրի գինը՝

Տարեկան փոստով . . . 8 ռուբլ
Կէս տարվան . . . . 4 „ 50 կ.
Մի ամսով . . . . . 1 „ „

Աստրագրութիւնը ընդունվում է Թիֆլիսում, Մէլիքովի և ընկ. տպարանում։ Օտարաքաղաքացիք կարող են իրանց պահանջները ուղղել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію газеты „Дроэба“.

1 (3)

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ»

ամսագիրը

Շարունակվելու է եկող 1875 թուին ևս ՇՈՒՇԻ քաղաքում, նոյն ուղղութեամբ և նոյն պրոգրամով։ Իւրաքանչիւր ամսի տետրակը մօտ երկու թերթից կազմված։

Տարեկան գինը 5 ռուբլ է, կանխիկ վճարելի։

Օտարաքաղաքացիք թող դիմեն հետևեալ հասցէով՝ Шуша, Архимандриту Хорену Степане. Редакція „Айкаканъ Ашхаръ“ (Арм. Міръ.)

Դուրս կը գայ շուտով մամուլի տակից

«ՍՈԽԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ»

Ընդունով լիակատար երգարան, ոլն բովանդակում է իր մէջ ազգային, տեղական և եկեղեցական երգեր՝ թուով 270։

Սորա մէջ գտնվում են գրեթէ այն ամեն թէ ապագրուած և թէ անտիպ երգերն, որոնք արդէն ժողովրդականութիւն են ստացած և երգվում են ամեն տեղ։

Իւրաքանչիւր օրինակի գինն է 1 ռուբլ։

Ծախվում է Մարդասիրական Ընկերութեան գրադարանում և պ. Գրիգոր Գիլդարեանցի թէյի խանութում։

Յանկացողները կարող են դիմել 'ի Ռադուկամ Խեանս տեղերը կամ թէ դէպի «ՍՈԽԱԿԻ» հրատարակիչը այս հասցէով.

Въ Баку Аваку Лазаревичу Григорьеву, въ Армянскомъ училищѣ.

2 (2)

Արհեստաւորի որ իր դասընթացքը աւարտել է ՄՕՍԿՎԱՅԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ կոնսերվատորիումի մէջ, պրոֆէսոր Ն. Ռուբինշտայնի աշակերտուհի, օրիորդ Ս. Ց. ՇԸՎԱԼԻԷ, շուտով պատիւ կունենայ տալ մի ԿՕՆՑԷՐՏ պիանոյի վրա, պ. Ի. Ֆ. Լոյկոյի մասնակցութեամբ։

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19. ՏԵՂԵԿԱՑՈՅՑ ԹԻՖԼԻՍ. 1874.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Դեկտեմբերի 18-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուսմպրիալ). .	5	90
Բամբակ Երևանու. . .	5	
„ Ամերիկայի սերմից	6	40
Բուրդը թուշի . . .	6	20
Թարաքամի . .	4	
Շաքարը ռսի (բրօցկու)	8	50
„ միւս տեսակը .	8	40
„ զագրան, տրանզիտ. . . .	5	
„ մաքսը վճարած	8	
Շաքարաւազը Ռսի . .	7	
Ղահվա Լիվանի լաւը. .	18	
„ Մօկո չատ լաւը	19	50
„ Մարաինկօի ցածր	15	
Աւիւրը Երևանի . . .	1	
Աւիւրը Գեանջա հասարակ. . . .	1	20
„ Շորագեալու. .	1	30
Գարին	„	65
Մոմ.	10	30
Փոխանակագիրը Պօլսի	6	40
„ Դավրէժի	4	45
Լօնդոնի կուրսը (Օդեսայի վերայ) 1 լիրան արժէ. .	7	16
Մարսէլ և Փարիզ 351 ֆր. արժէ	100	

ՀԵՌԱԳԻՐ

Քսան բառից կազմված հեռագիրը ածէ՝

	Ր.	Կ.
Կովկասի և Անզբրկովկասի գլխաւոր քաղաքները.	1	
Նոր-Նախիջևան.	1	
Մօսկվայ, Ս. Պետերբուրգ. Նիժնի-Նովգորոդ .	2	
Աւստրիա . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա. . .	2	63
Թիւրքիա . . .	3	
Ֆրանսիա . . .	3	50

ՆԱՒԵՐ

Օդեսայից Փօթի (ամառը) նաւը դուրս է գալիս հինգշաբթի օրերը ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փօթիից Օդեսա կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսայից Փօթի (ձմեռը) հինգշաբթի օրերը 3 ժամին։

Փօթիից Օդեսա չորեքշաբթի օրերը առաւօտեան։

Փօթիից Կ. Պօլիս նաւը դուրս է գալիս երկուշաբթի առաւօտները։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։ Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	8. 18	8. 17
Մցխէթ . . .	9. 18	10. 48
Գորի. . . .	11. 39	1. 43
Սուրամ. . .	1. 52	4. 30
Քութայիս . .	7. 55	
Փօթի. . . .	11. 27	

	առաւօտ.
Փօթիից . .	7. 38
Քութայիս . .	10. 12
Սուրամ. . .	4. 57
Գորի. . . .	7. 23
Մցխէթ. . .	9. 52
Թիֆլիս. .	10. 49

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ընդունում է

Ռուսաստան և Եւրոպա ամեն օր, բացի կիրակի։

Երկուշաբթի

Երևան, (Զուլֆ, Պարսկաստան) Օզուրգէթ, Ախալցխայ, Բէլի Կլիչ, Բագուի և Գանձակի նահանգ (ծանր փոստ)։

Երեքշաբթի

Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ (ձմեռը) Բագուի և Գանձակի նահանգներ (թեթև փոստ)։ Նուխի (Ցարսկի Կօլօդցի, Զաքաթալ, Սղնախ, Թէլաւ, Լազօդէխ) թեթև փոստ։

Չորեքշաբթի

Երևան, (Զուլֆ, Ալէքսանդրապոլ։ Նոր-Բայազեդ.) Զուզդիդ։

Հինգշաբթի

Սև և Միջերկրական ծովի տաճկաց նաւահանգիստներ։

Ուրբաթ

Երևան (Զուլֆ, Պարսկաստան, Ալէքսանդրապոլ) Օզուրգէթ, Ախալցխա, Բէլի Կլիչ, Սև և Ազով ծովի ռուս նաւահանգիստներ, (ամառը), Բագուի և Գանձակի նահանգները (թեթև փոստ)։

Շաբաթ

Նուխի, (Ցարսկ. Կօլօդ. Զաքաթ. Սղն., Թէլաւ).

Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու կէտեր ամեն օր, բացի կիրակի։

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակը ածէ. .	5
Ռուսաստան նամակը	10
Գերմանիա, Աւստրիա	10
Ֆրանսիա.	13
Անգլիա	14
Շվէյցարիա. . . .	14
Թուրքիա (Կ. Պօլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա . . .	16
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս . . .	27

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից Վլադիկավկաս ամեն օր ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգորսկ, Ստավրապոլ և Բոստով հինգ շաբթի և շաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

(Դեկտեմբերի 10-ին)

Լօնդօն մի ռուբլ ածէ $33\frac{1}{2}$ պէնս (փոխանակ 40 պէնս)։
Փարիզ մի ռուբլ ածէ $350\frac{1}{4}$ սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։

Առաջին 5% փոխառութեան տոմսակ . . .	$185\frac{1}{2}$
Երկրորդ . . .	$182\frac{1}{2}$
5% բանկի տոմս. 1 յունվարի	98
„ „ 2 „	$97\frac{3}{4}$
„ „ 3 „	—
5% րէնտա	$101\frac{1}{4}$
Ազով-Դոնի բանկի ակցիաներ.	222
Օդեսայի Առևտր. բանկի ակցիաներ	245
Ս. Պետերբուրգի քաղաքային կրեդիտի ընկերութ. օբլիգացիաներ	$90\frac{1}{4}$

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Շամախի. Ս. Վ. Ձեր պահանջած գրքերից մի քանիսները միայն կարող ենք ուղարկել ձեզ։ Պալասանի գրքի գինը 50 կոպէկ է։

—Երևան. Ա. Տ. Վ. Ուղարկեցինք։ Շնորհակալ ենք ձեր առաջարկութեան համար։

—Էջմիածին. Ա. Վ. Ս. Ստացանք նամակը։ Միւս փոստով կուղարկենք։

Дозволено Цензурою, 18 Декабря 1874 г. Тифлисъ Типографія Меликова и К-° Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ